Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 771 - Ա որոշման

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ձեռք բերել և/կամ ներմուծել սարքեր, սարքավորումներ, միջոցներ, դետալներ, կառուցվածքներ, մեխանիզմներ, ապարատներ, նյութեր, գործիքներ, պիտույքներ, պարագաներ և/կամ դրանց հումքը, տարրերը, կոմպոնենտները, բաղկացուցիչ մասերը, որոնք ՀՀ սահմանների անձեռնմխելիությունն ապահովող և աջակցող անձանց համար կծառայեն որպես անվտանգության և պաշտպանության երաշխիք:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքեր և այլ պարտադիր վճարների արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայ վիրավոր հերոսների աջակցման» հասարակական կազմակերպություն (ՀՀ, քաղ. Երևան, Իսակովի պողոտա, 11 Ա շենք, ՀՎՀՀ՝ 02283677)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայ վիրավոր հերոսների աջակցման» հասարակական կազմակերպություն (ՀՀ, քաղ. Երևան, Իսակովի պողոտա, 11 Ա շենք, ՀՎՀՀ՝ 02283677)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն՝ հանրային պաշտպանություն
6.	Ծրագրի բյուջեն	2 մլրդ 200 մլն դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետությունը և համայնքները՝ համաձայն «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի սեպտեմբերի 20-ից 2023 թվականի օգոստոսի 14-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ	1. Անհրաժեշտ սարքերի, սարքավորումների, միջոցների, դետալների, կառուցվածքների, մեխանիզմների, ապարատների, նյութերի, գործիքների, պիտույքների, պարագաների և/կամ դրանց հումքի, տարրերի, կոմպոնենտների, բաղկացուցիչ մասերի ձեռքբերում և/կամ ներմուծում՝ շուրջ 2 մլդ դրամի, նախատեսվում է իրականացնել 2021 սեպտեմբերի 20-ից 2023 թվականի օգոստոսի 14-ը:

	ֆինանսական միջոցների ծավալը	2. Անհրաժեշտ միջոցների, պարագաների պատրաստում՝ շուրջ 150 մլն դրամ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի սեպտեմբերի 30-ից 2023 թվականի օգոստոսի 14-ը: 3. Համապատասխան տարածքի վարձակալում՝ շուրջ 40 մլն, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի սեպտեմբերի 20-ից 2023 թվականի օգոստոսի 14-ը: 4. Կազմակերպական ծախսեր՝ կոմունալ վճարներ և արտադրական այլ ծախսեր՝ շուրջ 10 մլն դրամ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի սեպտեմբերի 20-ից 2023 թվականի օգոստոսի 14-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Անհրաժեշտ սարքերի, սարքավորումների, միջոցների, դետալների, կառուցվածքների, մեխանիզմների, ապարատների, նյութերի, գործիքների, պիտույքների, պարագաների և/կամ դրանց հումքի, տարրերի, կոմպոնենտների, բաղկացուցիչ մասերի ձեռքբերում և/կամ ներմուծում՝ շուրջ 2 մլդ դրամ. 2. Անհրաժեշտ սարքերի, սարքավորումների, միջոցների, դետալների, կառուցվածքների, մեխանիզմների, ապարատների, նյութերի, գործիքների, պիտույքների, պարագաների և/կամ դրանց հումքի, դրանց տարրերի, կոմպոնենտների, բաղկացուցիչ մասերի պատրաստում՝ շուրջ 150 մլն դրամ. 3. Համապատասխան տարածքի վարձակալություն՝ շուրջ 40 մլն դրամ. 4. Կոմունալ վճարներ և գրասենյակային ծախսեր՝ շուրջ 10 մլն դրամ.
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	- կոմունալ ծախսեր (գազ, էլեկտրաէներգիա, ջուր)՝ 7 մլն դրամ (ամսական շուրջ 305 հազար դրամ), - գրասենյակային ծախսեր՝ տարեկան 3 մլն դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն է նախատեսվում իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ համայնքների հետ:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Ս. ՊԱՊԻԿՅԱՆ

23.09.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ